Արձանագրություն N 2

ԵՐՋԷԿ-ՊԸԱՇՁԲ 12/17 ծածկագրով «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ՀՇԳՑ թիվ 1 էներգաբլոկի արտաքին լուսավորության ցանցի և հարակից տարածքի լուսավորության նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով ստեղծված գնահատող հանձնաժողովի

ք. Երևան 11 ապրիլի 2017թ. ժ. 14:00

Մասնակցում էին

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Ա. Գևորգյանը |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Ա. Ղուսալյանը |
| | Պ. Բոշնաղյանը |
| | Լ. Օհանյանը |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Ա. Պետրոսյանը |

Նիստին մասնակցում էր «Հիդրոէլեկտրամոնտաժ» ՓԲԸ-ի լիազորված անձ փոխտնօրեն Վլադիմիր Մարգարյանը, ԱՁ Գրիգոր Այվազյանի լիազորված անձ Խաչիկ Այվազյանը:

Գնումների պլանով նախահաշվային գինը 3 500 000(երեք միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ է:

<u>Նիստի օրակարգը</u>

1. ԵՐՋԷԿ-ՊԸԱՇՁԲ 12/17 ծածկագրով ներկայացրած հայտերի մասին:

2. Հրավեր ներկայացրած մասնակցի գրաված տեղի և մասնակցից համաձայն հրավերի պահանջվող փաստաթղթերի մասին:

3. «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի 110կՎ ենթակայանի 110 կՎ անջատիչների նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով ստեղծված գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի մասին:

<u>Հարց</u> 1. ԵՐՋԷԿ-ՊԸԱՇՁԲ 12/17 ծածկագրով ներկայացրած հայտերի մասին՝

1.1. Հայտ է ներկայացրել երկու կազմակերպություն՝

- «Հիդրոէլեկտրամոնտաժ» ՓԲԸ – (հասցեն՝ ք. Երևան, Արցախի 4-դ նրբ, տ 6),
- ԱՁ Գրիգոր Այվազյան - (հասցեն՝ Արարատի մարզ, գ. Ոստան, Թեհլերյան 14)

1.2. «Հիդրոէլեկտրամոնտաժ» ՓԲԸ-ն հայտը ներկայացրել է փակ ծրարների մեջ, ծրարների վրա, համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի, գրված է

Պատվիրատուի անվանումը, հայտերի ներկայացման հասցեն, ընթացակարգի ծածկագիրը, «Չբացել մինչև հայտերի բացման նիստը» բառերը, հայտը ներկայացնողի անվանումը, հասցեն, հեռախոսը:

1.3. «Հիդրոէլեկտրամոնտաժ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված են հրավերով նախատեսված բոլոր հավելվածները, տուժանքի մասին համաձայնությունը և վճարման պահանջագիրը, լիցենզիայի պատճենը, ինչպես նաև հավելված 4.1-ը-ծավալաթերթ նախահաշիվ:

1.4. Համաձայն հրավերի ներկայացվել է հրավերի փաստաթղթերի մեկ բնօրինակ, մեկ պատճեն:

1.5. Հրավերով նախատեսված աշխատանքների կատարման 5 545 249 (հինգ միլիոն հինգ հարյուր թառասունհինգ հազար երկու հարյուր քառասունիննը) ՀՀ դրամ, այդ թվում ԱԱՀ-ն:

1.6. «ԱՁ Գրիգոր Այվազյան»-ը հայտը ներկայացրել է փակ ծրարների մեջ, ծրարների վրա, համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի, գրված է Պատվիրատուի անվանումը, հայտերի ներկայացման հասցեն, ընթացակարգի ծածկագիրը, «Չբացել մինչև հայտերի բացման նիստը» բառերը, հայտը ներկայացնողի անվանումը, հասցեն, հեռախոսը, էլեկտրոնային փոստի հասցեն:

1.7. «ԱՁ Գրիգոր Այվազյան»-ի կողմից ներկայացված են հրավերով նախատեսված բոլոր հավելվածները, տուժանքի մասին համաձայնությունը և վճարման պահանջագիրը, լիցենզիայի պատճենը:

1.8. Համաձայն հրավերի ներկայացվել է հրավերի փաստաթղթերի մեկ բնօրինակ, մեկ պատճեն:

1.9. Հրավերով նախատեսված աշխատանքների կատարման 2 930 000 (երկու միլիոն ինը հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ, այդ թվում ԱԱՀ-ն:

Հարց 2. Հրավեր ներկայացրած հայտի և մասնակցի գրաված տեղի մասին:

Հանձնաժողովը որոշեց`

2.1. Ներկայացված հայտերի հիման վրա «ԱՁ Գրիգոր Այվազյան»-ի և «Հիդրոէլեկտրամոնտաժ» ՓԲԸ-ի հայտերը գնահատել բավարար:

2.2 Առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվել «ԱՁ Գրիգոր Այվազյան»-ին, երկրորդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Հիդրոէլեկտրամոնտաժ» ՓԲԸ-ին:

2.2 Հանձնարարել գնահատող հանձնաժողովի քարտուղար` Ա. Պետրոսյանին`

- Սույն նիստին հաջորդող աշխատանքային օրը ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացնել առաջին և երկրորդ տեղ զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ հարցումը:
- Սույն նիստի հաջորդ օրը www.gnumner.am կայքում հրապարակել հայտի բացման նիստի արձանագրությունը:
- Ծանուցել առաջին տեղ գրաված մասնակիցին՝ «ԱՁ Գրիգոր Այվազյան»-ին, ՀՀ կառավարության 2015թ-ի հունվարի 30-ի թիվ 105-ն որոշմանը կից հավելվածի (գնման գործընթացի կարգի) 47-րդ կետի 2-րդ ենթակետի համապատասխան, երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնելու՝

1. Հրավերով սահմանված թիվ 5 հավելվածը, 3.3 ու 3.6 հավելվածները հիմնավորող փաստաթղթերը:
2. Տվյալ աշխատանքների կատարման ծավալաթերթ նախահաշիվը համաձայն հրավերի թիվ 6 հավելվածին կից ձևաչափի,
3. Հավելված 3.2-ը հիմնավորող փաստաթղթերը, այն է նմանատիպ աշխատանքների կատարման պայմանագրերը, այդ պայմանագրերով կատարված աշխատանքների վերաբերյալ հնձնման ընդունման արձանագրությունները:
4. Հրավերում նշված թիվ 11-ը հավելվածը:
5. Պետռեգիստրի կողմից տրված տեղեկանքը, գրանցման վերաբերյալ:

Հարց 3. «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ՀՇԳՑ թիվ 1 էներգաբլոկի արտաքին լուսավորության ցանցի և հարակից տարածքի լուսավորության նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով ստեղծված գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի մասին:

Հանձնաժողովը որոշեց՝

1. Հանձնարարել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Պետրոսյանին՝

1.1. Սույն արձանագրության 2-րդ կետով պահանջվող փաստաթղթերը մասնակցից և ՀՀ ֆինանսների նախարարությունից եզրակացությունը

ստանալու օրվան հաջորդող օրը հանձնաժողովի անդամներին տրամադրել գնահատման թերթիկների երկուական օրինակ:

1.2. Հանձնաժողի անդամներից գնահատման թերթիկները ստանալուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում ամփոփել և հրավիրել գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ Ա. Գևորգյան

Անդամներ՝ Ա. Ղուսալյան

Պ. Բոշնաղյան

Լ. Օհանյան

Քարտուղար՝ Ա. Պետրոսյան